

ԱՐԵՎՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՄՔ Երկուշաբթի, 8 Օգոստոսի, 2008

ՀՀՂ Օրենչ Քաունթիի Հայ Դատի յանձնախմբի կազմակերպութեամբ Օգոստոսի 3-ին տեղի է ունեցել հանդիպում-ճաշկերոյթ, որի ընթացքում ներկաները առիթ են ունեցել հանդիպելու եւ լսելու Իլիւնոյսի նահանգից ժամանած ՀՀՂ Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի ատենապետ Քէն Խաչիկեանին, որը լայն բացատրութիւններ է տուել Հայ Դատի Յանձնախմբի աշխատանքների մասին: Նա նշել է, թէ արհեստագիտական սոր միջոցների ձեռնարկմամբ Հայ Դատի աշխատանքները հսկայական առաջընթաց են արձանագրել, ընդ որում փոքր թուով հայ բնակիչներ ունեցող շրջաններ հնարաւորութիւն են ունեցել սոր մասնաճիւղեր հիմնել եւ ապահովել հեռաւոր շրջանների գործիչների մասնակցութիւնը իրենց շրջաններում: Նա նաեւ անդրադարձել է Վաշինգտոնի գրասենեակի վարժողական ծրագրերի ընդլայնմանը, նշելով, որ 8 շաբաթուայ տեւողութեամբ այդ ծրագրերին մասնակցում են ուսանողներ ոչ միայն Միացեալ Նահանգների զանազան շրջաններից, այլ նաեւ Կանադայից եւ Հարաւային Ամերիկայից:



Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի յանձնախմբի ամառնային վարժողական ծրագրի մասնակիցները Չորեքշաբթի, Յուլիսի 30-ին, այցելել են Լոս Անջելոսում Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսարան, ուր ընդունուել են գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլիոյեանի եւ փոխհիւպատոս Սահակ Սարգսեանի կողմից: Սոյն այցելութիւնը պատեհ առիթ է հանդիսացել, որ վարժողական ծրագրի մասնակիցները աւելի մօտից ծանօթանան Հայաստանի հիւպատոսարանի ամենօրեայ գործունեութեանը, հիւպատոսին ու անձնակազմի անդամներին եւ հարցումներ ուղղեն Հայաստանի սոր այցագրերի երկքաղաքացիութեան, Միացեալ Նահանգներ-Հայաստան յարաբերութիւնների եւ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի տնտեսութեան զարգացման ծրագրերի վերաբերեալ:



«Հայերը Օբամայի համար» կազմակերպութիւնը անդրադառնալով Սենատոր Բարակ Օբամայի կողմից վերջերս կատարուած բացայայտումներին, նշել է, թէ Հանրապետական կուսակցութեան թեկնածու Ջան ՄըքԷյնը սերտ կապեր ունի նաֆթարդիւնաբերական խոշոր ընկերութիւնների հետ, որոնց հետեւանքով նրա ապագայ որոշումները չեն կարող անկողմնակալ համարուել: Ըստ այդ բացայայտումների, ՄըքԷյնը մինչ այժմ 1 միլիոն 100 հացար դոլարի նուիրատուութիւններ է ստացել նաֆթարդիւնաբերական ընկերութիւններից ու դրանց պաշտօնատարներից: «Հայերը Օբամայի համար» կազմակերպութեան ատենապետ Արին Իպրանոսեանը յայտնել է, թէ Օբամայի քարոզչական այս արշաւը պարզորոշ է դարձնում, որ նախագահ ընտրուելու պարագային, ՄըքԷյնը կը շարունակի նեցուկ կանգնել նաֆթարդիւնաբերական ընկերութիւններին, որոնք միլիարդաւոր դոլարի ներդրումներ են կատարում Ադրբեջանի նման երկիրներում, ուր մարդկային տարրական իրաւունքներ անգամ չեն յարգուում: «Ամերիկահայ գաղութը ողջունում է եռանդուով համաշխարհային տազնապի նկատմամբ Օբամայի որդեգրած նորարար մօտեցումները եւ հաւատում է, որ նման առաջդիմական մօտեցումները աւելի նպաստաւոր եւ ապահով պայմաններ են ստեղծելու բոլոր ամերիկացիների համար», ասել է Իպրանոսեանը: «Հայերը Օբամայի համար» կազմակերպութեան աշխատանքների մասին յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար կարել է այցելել կազմակերպութեան համացանցային կայքէին www.armeniansforobama.com հասցեով:



Չորեքշաբթի, Օգոստոսի 5-ին, Օրենչ Քաունթիի «Չէփմէն» համալսարանի իրաւաբանական բաժանմունքի ճաշկերոյթի ընթացքում ելոյթ է ունեցել Հայաստանի վճռաբեկ դատարանի գլխաւոր դատաւոր Յովհաննէս Մանուկեանը: Ճաշկերոյթին ներկայ են եղել Կալիֆորնիայի տարբեր շրջանների մօտաւորապէս 50 դատախազներ, ինչպէս նաեւ համալսարանի դատախազական ակադեմիայի բաժանմունքի ուսանողներ:

Դատաւոր Մանուկեանը ընդհանուր գիծերով ներկայացրել է Հայաստանի արդարադատութեան համակարգը եւ բացատրել, թէ ինչո՞ւ Հայաստանի իշխանութիւնները որոշել են որդեգրել Ֆրանսայի եւ Բելգիայի դատաիրաւական համակարգին նմանող համակարգ՝ Հայաստանի համար: Միջոցառմանը քննարկուել են նաեւ մահապատժին, անչափահասների յատուկ ատեաններին, դատաւորների աշխատավարձերին, գեղծարարութեանը եւ այլ խնդիրներին առնչուող կետեր: Նշենք, որ դատաւոր Յովհաննէս Մանուկեանը հրաւիրուել էր «Չէփմէն» համալսարանի իրաւաբանական բաժանմունքի տնօրէն Ջան Իստմընի կողմից:



«Յեղասպանութեան կրթական ծրագիր»-ը, որը հիմնուել է 2005 թուականին Սան Ֆրանցիսկոյում, նիւթեր է տրամադրում ամերիկեան վարժարաններին՝ աշխարհում տեղի ունցած ցեղասպանութիւնների, մասնաւորաբար Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ տեղեկութիւններ փոխանցելու ուսուցիչներին, մանկավարժներին եւ հիմնականում՝ աշակերտութեանը, նոր սերնդին: Այսպիսով, ծրագիրը միտում նպաստել ցեղասպանութիւնների կանխարգելման համաշխարհային ջանքերին: Ծրագրի համահիմնադիր եւ ներկայ վարիչ գործավար Ռաֆֆի Սումճեանը շեշտելով, որ ցեղասպանութեան մասին կրթական նպատակայարմար համակարգ չկայ Միացեալ Նահանգների միջնակարգ դպրոցներում, յայտնել է, թէ «Յեղասպանութեան կրթական ծրագիր»-ը գործակցում Լոս Անջելոսի եւ Գլենդէլի կրթաշրջանների հետ, պատմութիւն դասաւանդող ուսուցիչներին ցեղասպանութեան մասին համապարփակ տեղեկութիւններ տրամադրելու եւ վերապատրաստման նպատակով համապատասխան աշխատանիստներ կազմակերպելու ուղղութեամբ: Ներկայումս շուրջ 300 պատմութեան ուսուցիչներ օգտուում են ծրագրի տրամադրած նիւթերից: «Յեղասպանութեան կրթական ծրագիր»-ը ստեղծել է նաեւ իր համացանցային կայքէջը՝ www.genocideeducation.org հասցեով, որպէսզի երկրով մէկ աւելի մեծ թւով ուսուցիչներ կարողանան նիւթեր ունենալ ցեղասպանութեան մասին:

Այս լուրերը տրամադրում են
ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: